

## Գրախոսություն

Աստղիկ Սողոյանի «Խաչատուր Աբովյանի պատումի արվեստը» ատենախոսության

Ժամանակային կոնտեքստների փոփոխությունը ծնում է նոր ընթերցող՝ այլ աշխարհայացքով, քաղաքական-սոցիալական ու գաղափարական այլ ընկալումներով, և հենց այս նոր ընթերցողն է, որ որոշիչ դեր ունի որևէ հեղինակի ստեղծագործության նորացման հարցում, քանի որ հասցեատիրոջ փոփոխությունից փոխվում է նաև տեքստը: Գիտական նոր մոտեցումները մեր դեպքում գալիս են համալրելու ժամանակային այս փոփոխությունները և առաջ բերում նոր մետատեքստեր:

Այս առումով շատ հեղինակների բազմաթիվ ստեղծագործություններ բավականին երկար ժամանակ անհաղորդ են մնացել կամ շարունակում են մնալ անգամ արդեն անցյալ դարձած մոտեցումներով մետատեքստեր ունենալու հնարավորությունից: Այդպես բոլորովին նոր չեն ո՛չ կառուցվածքաբանությունը, ո՛չ նարատալոգիան, որոնք՝ որպես գրականագիտական մեթոդաբանություն և գործիքակազմ, շատ առումներով անտեսված են եղել մեր գրականագիտության կողմից, իսկ ստեղծագործությունները զրկվել են այդ մոտեցումներով իրենց գիտական-ընթերցողներից: Հայ գրականագիտությունը հարուստ ձեռքբերումներ ունեցած կլիներ, եթե սրանցով համալրվեր չափազանց սիրված ու հումանիտար գիտության գիտավերլուծական մակարդակում գերակայություն ունեցող պատմահամեմատական մեթոդը:

Աստղիկ Սողոյանի թեկնածուական ատենախոսությունը մեր գրականության շատ հեղինակների համար չկիրառված մեթոդով բազմիցս հետազոտված հեղինակի ստեղծագործության գիտական թարմացման մի լավ օրինակ է: Հետազոտողի նախընտրած մոտեցումը Աբովյանի ստեղծագործությանը կառուցվածքաբանականն է և նարատալոգիան:

Ատենախոսը հեղինակի ստեղծագործությունն ուսումնասիրել է բազմաշերտությամբ՝ չխորշելով ներառել տարասեռ գործեր և հետևողականորեն առաջ գնալ իր նախընտրած գիտական գործիքակազմով: Շատ տպավորիչ է հատկապես գրող-տեքստ-հասցեատեր շրջանակում մինչև վերջ ու հմտորեն պատումի վերլուծությունը, որը հնարավորություն է տվել ատենախոսության հեղինակին մեկնաբանության հնարա-

վորությունները լայնացնելու և դիտարկելու որպես Աբովյանի գեղարվեստական և ոչ գեղարվեստական տեքստերի պատումային ամբողջություն:

Աշխատանքի մյուս ուժեղ կողմերից մեկը երկխոսությունները՝ որպես պատումային ու ստեղծագործության գործողությունները զարգացնող հնարք, դիտարկելն է, օրինակ՝ երկխոսությունները «Աղասու խաղը» պոեմում, «Վերք Հայաստանի» վեպում, որոնցում ֆորմալիստական մոտեցմամբ ներկայացվում են երկխոսությունների սխեմաները որպես ստեղծագործության գործողության զարգացման հիմք: Այս հնարքի ուսումնասիրությունը մի այլ կողմից լրացնում ու հարստացնում են առասպելական մոտիվների, բինարային կառույցների վերլուծությունը, որոնք ապահովում են նաև ստեղծագործությունների ձևային կառույցների մեջ բովանդակային կողմը ի հայտ բերելը:

Աշխատանքի այս հատվածն էականորեն շահած կլինեք, եթե պատումի արվեստը՝ նարատիվը, քննվեր դիսկուրսի հայեցակարգով, որն ընկած է տեքստի ուսումնասիրության ամենամեծ հետազոտողներից մեկի՝ Յուլյա Կրիստևայի աշխատության հիմքում, որտեղ հատուկ ուշադրություն է դարձվում երկխոսության նշանագիտական քննությանը: Եթե ատենախոսը ցանկանա, ապա հետագայում աշխատանքն ավելի կխորացնի ու վերլուծության առումով ավելի իմաստալից կդարձնի այդ սկզբունքը կիրառելով, հատկապես որ այն հնարավորություն կտա երբեմն գուտ սխեմատիկ, մորֆոլոգիայի հասնող կառույցները հիրավի նարատալոգիայի սկզբունքով ամենախորքային վերլուծության: Կարծում եմ՝ այս թերացումը պարտադիր անցումային մի փուլ է նոր մեթոդները նախընտրողների համար, ինչին անպայման հաջորդում է մեթոդների ավելի խորքային կիրառումը, որը սխեմատիկ տպավորություններն արագ ցրում է: Այս առումով կատարված աշխատանքի որակը և ատենախոսի պոստենցիալը վստահություն է ներշնչում, որ հաջորդող փուլում դա իսկապես կիրացվի:

Անդրադառնալով ատենախոսության այն հատվածին, որտեղ Աստղիկ Սողոյանը քննում է այն գործերը, որոնցում խախտվում են ժանրային սահմանները, կուզենայի հատկապես առանձնացնել մանկազրական պատումի ուսումնասիրությունը:

Գեղարվեստի և մանկավարժական հայեցակարգի սահմանների խախտման ուսումնասիրությամբ նա հատուկ առանձնացնում է հասցեատիրոջ փոփոխությամբ

պայմանավորված ասելիքի տարբեր մեկնաբանությունները՝ որպես պատումային հնարք:

Ձևական կադապարների միջոցով բովանդակությունը վերլուծելու կարևոր մոտեցումներից մեկն էլ հոգեվերլուծական դիտարկումներն են, ուր, ի տարբերություն գոնե իմ գրախոսած այլ աշխատանքների, տեքստի ու կերպարների հոգեվերլուծության է հասել ոչ թե պարբերաբար *հոգեբանություն* բառի կրկնությամբ ու ինտուիտիվ հոգեբանական ընկալումներով, այլ իսկապես համապատասխան գիտական ձեռքբերումների վրա հենվելով ու կիրառելով՝ հիմնավորապես բարձրացնելով աշխատանքի գիտական մակարդակը:

Աշխատանքի գրականագիտական առավելությունները շատ էական են ու շեշտադրելի, ինչի շնորհիվ Աստղիկ Սողոյանն արժանի է իր հայցած գիտական աստիճանին, սակայն կուրզենայի փոքրիկ խմբագրական դիտարկումներ անել, որոնցով, ցանկության դեպքում, կարելի է հարստացնել ու ավելի հստակ դարձնել գիտական աշխատանքը:

Նախ կուրզենայի մի փոքր անդրադարձ կատարել զգացմունքային մոտեցումներին, որը մի կողմից օգնում է ատենախոսին՝ սիրով մոտենալու իր նյութին, մյուս կողմից երբեմն կան զգացմունքայնության արտահայտության պահեր, որոնցից կարելի է ազատվել, քանի որ դրանք իսկապես անիմաստ են: Օրինակ՝ էջ 20-ում ատենախոսը գրում է՝ «աբովյանական մտքի մյուս գոհարները», որը հիրավի գիտական բնութագրում չէ: Ես վստահ եմ, որ ատենախոսը սրան քաջ տեղյակ է, քանի որ ԲՈԿ-ի կազմակերպած դասախոսությունների շարքին մասնակցում էր, որտեղ ես խոսել եմ այս մասին: Մի այլ տեղ *անվանի գիտնական* բնորոշումն է գործածում, որը տարածված է մեր գիտության, ինչպես նաև հետխորհրդային երկրների գիտության մեջ, բայց որն արևմտյան գիտության մեջ խիստ կասկածի տակ է առնվում, քանի որ անվանի գիտնականին պետք է առնվազն տվյալ գիտակարգի շրջանակում ճանաչեն ոչ միայն հայ մասնագետները: Սա պետք է հաշվի առնել հատկապես, քանի որ այս աշխատանքներն ի վերջո կարող են հետաքրքրել նաև ոչ հայ գրականագետներին, և նրանք այդ անվանիին պետք է փնտրեն, օրինակ, Ֆուկոյի, Բարտի, Բախտինի և այլոց կողքին: Մենք այդպիսի անուն չունենք: Կարելի է բավարարվել պարզապես *գրականագետ* կամ տվյալ դեպքում՝ *աբովյանագետ* բնորոշումներով:

